



Տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում Հաճախորդի մեքենային պատճառվել է գույքային վնաս: Ոստիկանության կողմից կայացվել է քրեական գործի կարճման մասին որոշում՝ հանցակազմի բացակայության պատճառով: Հաճախորդի պնդմամբ՝ եզրակացությունը ստանալուց հետո նա դիմել է Ավտոապահովագրողների բյուրո՝ ապահովագրական հատուցում ստանալու նպատակով, քանի որ մեղավոր կողմը գործող ԱՊՊԱ պայմանագիր չի ունեցել: Բյուրոն մերժել է ապահովագրական հատուցման վճարումն այն պատճառաբանությամբ, որ Հաճախորդի կողմից բաց է թողնվել հատուցման համար դիմելու եռամսյա ժամկետը: Հաճախորդն իր հերթին նշել է, որ անտեղյակ է եղել եռամսյա ժամկետում դիմելու անհրաժեշտության մասին, քանի որ վերջինիս տեղեկացրել էին, որ քննչական բաժնում նյութերի նախապատրաստման ավարտից հետո միայն կարող է դիմել հատուցում ստանալու համար:

Խնդրին լուծում տալու նպատակով Հաճախորդը դիմել է Հաշտարարին՝ Բյուրոյից պահանջելով փոխհատուցել իր կրած վնասը:

Հաշտարարին տրված իր մեկնաբանություններում Բյուրոն, վկայակոչելով պայմանը, որ հատուցում ստանալու համար օրենքով սահմանված եռամսյա ժամկետը սկսվում է ապահովագրական պատահարի օրվանից, պնդում է, որ պատահարի առնչությամբ համապատասխան մարմինների կողմից նյութի նախապատրաստումն ինքնին չի կարող առաջացնել հատուցում ստանալու համար սահմանված ժամկետում դիմելու անհնարիություն: Ավելին, Հաճախորդը հնարավորություն ունեցել է օրենքով սահմանված ժամկետում հատուցում ստանալու համար դիմել Բյուրո:

Հաշտարարը, ուսումնասիրելով գործում առկա փաստերը, պարզել է, որ մինչև ՃՈ եզրակացությանը ծանոթանալը Հաճախորդը պարզապես հնարավորություն չի ունեցել իմանալու, որ ինքը նույնպես հանդիսանում է պատահարի տուժող կողմ, քանի որ այն փաստը, որ երկու կողմերն էլ մեղավոր են պատահարում, հաստատվել է միայն մասնագիտական վերլուծություններից հետո: Սա համարելով այնպիսի իրավիճակ, որ տուժողի համար անհնար է դարձրել դիմել Բյուրո՝ Հաշտարարը փաստել է, որ Բյուրոն պարտավոր է Հաճախորդին տրամադրել ապահովագրական հատուցում:

Վնասի չափը ճշտելու համար Հաշտարարը ներգրավել է փորձագետ, որի եզրակացության հիման վրա կայացվել է Հաճախորդի պահանջի մասնակի բավարարման որոշում: